ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

DOI: 10.57192/18291864–2022.3–3

ԹՈՒՆԵԼԻ ՎԵՐՋՈՒՄ ԼՈՒՅՍ Է ԵՐԵՎՈՒՄ*

Բանալի բառեր – պանթյուրքիզմ, Ռուսաստան, վարչակարգ, պետություն, ամենալավ բարեկամ, ամենավտանգավոր թշնամի, Հայաստանի պատանդառում, ազգային քաղաքականություն:

2018 թ. «թավշյա բեմականացման» ու 2020 թ. 44–օրյա պատերազմի քաղաքական հետնաբեմի համակողմանի քննությունը ժամանակի ընթացքում մեզ բերել է այն համոզմանը, որ գործ ենք ունեցել **Հայաստանի պետականության** կազմաքանդման մեծապետական ծրագրի հետ, որը հիմնված էր սեփական մտադրությունների քողարկման հստակ աշխատակարգերի վրա:

Այդ ծրագիրը՝ որպես խորհրդային նախկին կայսրության վերականգնման գործընթացի առաջին հանգրվան, նախատեսում էր 2020 թվականին «Լեռնային Ղարաբաղում ու նրա շուրջ» խաղարկել 1920–ականների Լենին–Աթաթուրք դավադրության կրկնօրինակը՝ Արևմուտքում ձեռքերի ազատություն ստանալու և ապա ԽՍՀՄ–ի 100–ամյակի տարում՝

* Ընդունվել է տպագրության 29.09.2022:

2022 թվականին, այդ **նոր-հին** կայսրությանն իրավական տեսք տալու համար:

Առաջին հանգրվանում պետք է խորտակվեր 1990-ականների սկզբներին ժողովրդավարական Ռուսաստանի աջակցությամբ Թուրքիայի ու Ադրբեջանի միջև կառուցված Լեռնային Ղարաբաղի հարավային պատնեշը, և պատանդ վերցվեր նրա հյուսիսային մասը՝ Հայաստանին հետագա քաղաքական վարքագիծ թելադրելու համար:

Երկրորդ հանգրվանում իրականացվելու էր միջազգայնորեն ճանաչված Հայաստանի ինքնիշխանության կազմաքանդումը Սյունյաց աշխարհը մասամբ ռազմակալելու, դեպի Նախիջևան միջանցք բացելու, իսկ մնացած տարածքը նախկին ԽՍՀՄ-ը հիշեցնող վերպետական միավորման մեջ ներառելու միջոցով:

Այս ծրագրի իրականացման առաջին հանգրվանից երկրորդին անցնելու համար պարտադիր էր նախկին ԽՍՀՄ տարածքում առկա **ինքնիշխան կամքի** այլ կենտրոնների ճնշումը, որոնցից կարևորագույնը Ուկրաինան էր: Եվ ինչպես մեկ անգամ արդեն եղել է Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ 1919 թ. աշնանը, 2022 թ. նույնպես Մոսկվայի **կայսերական խոփը** ուկրաինական քարին դեմ առավ ու սկսեց տեղապտույտ կատարել: Բայց այն ժամանակ դա հանգեցրեց 1919 թվականի վերջերին իր «դենիկինյան թիկունքը» կորցրած Հայաստանի Հանրապետության անկմանը: Այժմ թվում է, թե կրկնվում է նույնը, բայց խորքային ուսումնասիրությունն իրականում ճիշտ հակառակի մասին է վկայում, քանզի 1919 թվականը մեր տարածաշրջանից Արևմուտքի հեռացման տարին էր, իսկ ներկա՝ 2022 թվականը՝ վերադարձի:

Ուկրաինայում իր ձախողման գիտակցումն այսօր պաշտոնական Մոսկվային Հարավային Կովկասում դրել է երկու տարի առաջ իր եփած «ճաշն ուտելու» կամ սեղանից հեռանալու երկընտրանքի առաջ: Որովհետև նախապես պանթյուրքիստների հոշոտմանը հանձնված Հայաստանին խաղաղության պայմանագիր պարտադրելու հետագա փորձերն ուղղակի զրոյացնելու են նրա ներկայությունը Հարավային Կովկասում: Լեռնային Ղարաբաղի հարավային պատնեշի խորտակման կայսերական նպատակի քողարկման համար 2018 թ. գարնանը Հայաստանի քաղաքական օլիմպոս «հրված» փաշինյանական թիմը նույնպես հայտնվել է տարօրինակ իրավիճակում: Մենք դեռ 2018 թ. ամռանն ենք նկատել, որ Ռուսաստանի կայսերական համակարգը 2018 թ. գարնանը գտել է այն **քավության նոխազին**, որին «ադրբեջանական նոր ագրեսիայի սանձազերծման միջոցով»[1] դարձնելու է իր հակահայ խաղի մերկությունը քողարկող լաթը: Որովհետև Ռուսաստանի կայսերական համակարգի իրական թիրախն ազատ Արցախն ու անկախ Հայաստանն էին, ուստի նման նոխազներին «սորոսականներ» կարգելով՝ «արդարացվում էին» մեզ հասցվող ցավոտ հարվածները:

Մեր ժողովրդին արյան գետեր արժեցած, իսկ Ռուսաստանի իրական՝ **ազգային շահերին** միայն ու միայն վնաս հասցրած այս ողբերգության հետևանքով 2022 թ. վերջերին կարծես վրա է հասնում այն պահը, երբ թվում է, թե մնացել է միայն 100-ամյա պարբերականությամբ կնքվող՝ 1921 թ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի կրկնօրինակի ստորագրումը, այսինքն՝ Հայ Դատի նպատակների **ծիսական զոհաբերությունը**: Բայց քանի որ ուկրաինական պատերազմում իր հակառակորդ Ռուսաստանի թուլացումից հետո Արևմուտքն այլևս թուրքերի աջակցության կարիքը չունի, Թուր-

1 «Եռաչափ գործընթացի վտանգավոր հետագիծը», «Վէմ», Եր., 2018, N 2, էջ 5:

քիան չի կարող իր պանթյուրքական նկրտումների մոսկովյան աջակցությունը վերավաճառել 2023 թ. «Լոզան–2»–ում: Իր հերթին թուլացող Ռուսաստանը նույնպես չի կարող իր հույսը դնել «թուրքական սիրավեպի» երկարաձգման վրա, քանի որ Թուրքիան վերջին պահին միշտ անցնում է **ուժեղի կողմը**:

Երկու կողմերի սահմանափակվող կայսերական նկրտումների **փակուղայնությունը** փրկության հնարավորություն է Հայաստանի համար: Սա չի նշանակում, որ Ռուսաստանի կամ Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականությունը փոխվում է. տարածաշրջանում Արևմուտքի ակտիվացման պայմաններում խոսքն առայժմ ոչ թե նրանց ցանկությունների, այլ **հնարավորությունների** նվազման մասին է: Ուստի Ուկրաինայում ձախողված Ռուսաստանի կայսերական համակարգը, իր կամքից անկախ, մի կողմից դառնում է Արցախի ժողովրդի գոյության երաշխավորը, մյուս կողմից շարունակում է մնալ Հայաստանի՝ որպես անկախ պետության վրա կախված սպառնալիքը: Երջանկահիշատակ **Ռուբեն Դարբինյանի** հստակորեն արձանագրած նման օրինաչափությունը՝ **Ռուսաստանը պետականազուրկ հայերի ամենալավ բարեկամն է, բայց անկախ Հայաստանի թերևս ամենավտանգավոր թշնամին**, թույլ է տալիս հասկանալ 2020 թ. նոյեմբերի 9–ի հայտարարագրի խորքային իմաստը, այն է՝ **հայերի պատանդառումն է** կայսերական Ռուսաստանի տարածաշրջանային միակ լծակը, որը պարբերաբար գործադրվում է մեզ զոհաբերելու և ապա «փրկելու» միջոցով: Ուստի Ռուսաստանի թուլացման պատճառով իր ուշացող «փրկությանը» սպասող պատանդի հետագա վարքի տարբերակները երեքն են:

Առաջինը ողորմելի կկվի նման հաջորդաբար սեփական ձագերին զոհաբերելով «Լենին–Աթաթուրք–2» դավադրության շրջագծում անզոր թպրտալու վարքագիծն է, որով մինչ օրս առաջնորդվում էր Հայաստանի իշխանությունը, քանզի նրա **թույլատրված թրքամետությունը** նույնպես «կրեմլյան ինդուլգենցիայի» արդյունք էր:

Երկրորդ տարբերակը ենթադրում է **ազգային հեղափոխություն՝** արտաքին քաղաքականության վեկտորի կտրուկ, արագ ու հիմնավոր փոփոխությամբ, բայց քանի որ Ռուսաստանը՝ **որպես պետություն**, ներկա է Արցախում, իսկ նրա «աքիլեսյան գարշապարը» Կրեմլում հոգեվարք ապրող վարչակարգն է, մինչև վերջերս պահպանվում էր խաչաձև կրակի տակ ընկնելու լուրջ վտանգը:

Ուրեմն ճշգրիտ քաղաքականությունը **երրորդ տարբերակի** ընտրությունն է, որը պահանջում է ոչ թե շրջել առանց այդ էլ փլուզվող կայսերական բուրգը, այլ պանթյուրքիզմի դեմ մեր պայքարում նորանոր խաղացողներ (Իրան, Հունաստան, Հնդկաստան, Ֆրանսիա և ամենակարևորը՝ ԱՄՆ) ներգրավելու միջոցով **փաստացի** մեկտեղել ԱՄՆ–ի ու Ռուսաստանի ազգային շահերը, որոնք Հայաստանի հարցում չեն էլ հակասում իրար: Անշուշտ, սեփական երկրի ազգային շահերը «Լենին–Աթաթուրք–2»–ով փոխարինած Ռուսաստանի կայսերական համակարգը Ադրբեջանի ձեռքերով դեռևս հարվածներ է հասցնում մեզ: Բայց դրանց **արտաքին ճակատի** շրջափակման պայմաններում հոգեվարք ապրող այդ համակարգին մնացել է միայն 44–օրյա պատերազմի ժամանակ Արցախում խաղարկված «դավաճանության մրցույթը» Հայաստան տեղափոխելու տարբերակը:

Պատճառն ակնհայտ է. արտաքին ճակատում այսօր ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ Թուրքիան չունեն 1921 թ. Մոսկվայի պայմանագրի ժամանակների՝ **ուժը**, որ մեր փոխարեն ստորագրեն Հայ Դատի պայքարը շրջափակող որևէ փաստաթուղթ: Միակ ուժը, որը կարող է դա անել, մեր ներսում է՝ տասնամյակներ շարունակ **հավաքագրվածների** շարանի մեջ: Մեր տարածաշրջանում Արևմուտքի ակտիվացմամբ «Լենին-Աթաթուրք-2» դավադրությունն արդեն շրջափակման մեջ է հայտնվել: Բայց նոր պայմաններում **քավության նոխազից** ինքնաբերաբար **Քաջ Նազարի** վերածվող Նիկոլ Փաշինյանը չունի ազգի առաջնորդի դերը ստանձնելու համարձակությունը, գիտելիքը և ամենակարևորը՝ **ազատությունը**: Մինչդեռ այսօրվանից պետք է մտածել Արևմուտքի ու Իրանի կողմից **հավասարակշռվող** ուժերի հարաբերակցությունն արմատապես մեր օգտին փոխելու մասին:

Նման հավասարակշռության վերականգնման հետևանքով արդեն բացառվում է Հայաստանի պետականության կազմաքանդման «Լենին-Աթաթուրք-2» դավադրության երկրորդ հանգրվանի նպատակների իրականացումը: Բայց քանի որ դրա առաջին հանգրվանում չեկիստների ու պանթյուրքիստների տանդեմը պատանդառել է Արցախը, ներկա գործընթացների առանցքում **Հայաստանի ինքնիշխանությունը զիջելով Արցախը ժամանակավորապես «պահելու» կամ ընդհակառակը՝ Հայաստանի ինքնիշխանությունը պահելով Արցախը զիջելու դաժան երկընտրանքն է**: Բայց դա էլ կարելի է հաղթահարել, քանի որ մեր հարևան երկրներում հասունացող հեղափոխական ցնցումների թունելի վերջում արդեն լույս է երևում՝ կայսրությունների փլուզման ու ժողովուրդների ազատագրության լույսը, որը շուտով տարածվելու է մեր տարածաշրջանում:

Այդ փրկարար լույսից մեզ բաժանող փոքր տարածությունը Հայաստանի ինքնիշխանության և Արցախի անվտանգության պարտադիր ու պատվաբեր առաջադրանքների համադրմամբ հաղթահարելու համար մեզ հարկավոր է հավաքագրվածների համակարգից դուրս գտնվող առաջնորդ՝ **ազգը միավորող անհատականություն**:

Խմբ.

A LIGHT IS SEEN AT THE END OF TUNNEL

Key words - Pan-Turkism, Russia, regime, state, the best friend, the most dangerous enemy, taking Armenia hostage, national politics.

Edit.

В КОНЦЕ ТОНЕЛЯ ВИДЕН СВЕТ

Ключевые слова - пантюркизм, Россия, режим, государство, лучший друг, опаснейший враг, взятие Армении в заложники, национальная политика.

Ред.